ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N 03/25424-2023

«23» Դեկտեմբերի 2023թ.

«ՍՈԼԱՐ ԻՔՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ ԱՐԵՎԻԿ ԱՆԱՆՅԱՆԻՆ
ՀԱՍՑԵ՝ Ք. ԵՐԵՎԱՆ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 5-ՐԴ ՇԵՆՔ, ԲՆ. 17

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 230-րդ հոդվածը և հաշվի առնելով թիվ Վ/Դ-420 վարչական վարույթի արդյունքում արձանագրված խախտումները ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

2023 թվականի դեկտեմբերի 19-ին ժամը 11:00-ին Դուք կամ Ձեր կողմից լիազորված անձը (լիազորագրով, անձը հաստատող փաստաթղթով) հրավիրվում եք մասնակցելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը, որը տեղի կունենա ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում (ՀՀ Երևան, Նորք-Մարաշ, Ա.Արմենակյան փ. 129, 5-րդ հարկ):

Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի՝ վարչական պատասխանատվության ենթարկվող անձը իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին, բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, գործի քննության ընթացքում օգտվելու փաստաբանի իրավաբանական օգնությունից, ելույթ ունենալու մայրենի լեզվով և օգտվելու թարգմանի ծառայություններից, եթե չի տիրապետում այն լեզվին, որով տարվում է վարույթը, գանգատարկելու գործով որոշումը:

Восстановимая подпись

X

Подписано: GRIGORYAN VAHAGN 3914740051
ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ Վ. Ավետիսյան
Աշխատանքային օրենսդրության իրավական վերահսկողության բաժին
Հեռ. 10 65 05 53 (20)